ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ԱՊՄ) ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ, ՀԱՍՏԱՎԱԾ COVID 19 ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ և ԿԱՍԿԱԾՅԱԼ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

	Դիմակ սովորական	**N95 (ռեսպիրատոր տեսակի)**	**Աչքերի/դեմքի պաշտպանություն**	**Ձեռնոցներ և հատուկ կոմբինեզոն**
Առանց ախտանշանների պացիենտ կամ այցելու	Անձնական պաշտպանության միջոցների կարիք չկա՝ պահպանել սոցիալական տարածությունը, լվանալ ձեռքերը, հետևել ներհիվանդանոցային կանոններին և հրահանգներին			
Շնչառական ախտանշաններով կամ հաստատված COVID19-ով կամ վերջինիս թեստի պատասխանին սպասող պացիենտ	Կրել դիմակը միայն տեղափոխման ընթացքում, հիվանդասենյակում կրելը պարտադիր չէ			
Հաստատված COVID19-ով կամ վերջինիս թեստի պատասխանը սպասող պացիենտի այցելու	Կրել դիմակը տվյալ պացիենտի հետ նույն հիվանդասենյակում գտնվելիս			Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ
Հիվանդանոցի կամ բաժանմունքի մուտքին սկրինինգ/ջերմաչափում անցկացնող բուժաշխատող	Կրել դիմակ [1]		Կրել պաշտպանիչ ակնոցներ [2]	
Պացիենտների ընդունելությամբ/զննումով ակտիվ զբաղվող բուժաշխատող	Կրել դիմակ [1]		Կրել պաշտպանիչ ակնոցներ [2]	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ
Շնչառական վիրուսների (ներառյալ COVID19-ի) նմուշառմամբ զբաղվող բուժաշխատող	Կրել դիմակ		Կրել պաշտպանիչ ակնոցներ	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ

Ստորև նշված միջամտություններ իրականացնող բուժանձնակազմ • **բրոնխոսկոպիա** • **աերոզոլային թերապիա** • **ինտուբացիա/էքստուբացիա** • **ոչ ինվազիվ շնչառական օգնություն** • **շնչուղիների բաց արտածծում** • **էնդոսկոպիա** • **քիթ-ստամոքսային խողովակի տեղադրում** • **տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն** • **բարձր հոսքով թթվածնային թերապիա** • **ՔԿԱ վիրահատություններ** • **դիմածնոտային վիրահատություններ** • **լապարոսկոպիկ և կրծքային վիրահատություններ**		Կրել N95 ռեսպիրատոր	Կրել պաշտպանիչ ակնոցներ	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ

1. Երկարատև օգտագործման գործելակարգ սովորական դիմակների և N95 համար՝ մեկ դիմակ հերթափոխի համար: Փոխել դիմակը, երբ վերջինս աղտոտվում է շնչական արտադրություններով կամ ակնհայտ աղտոտված կամ վնասված է: Դիմակը մշտապես պետք է ծածկի միաժամանակ քիթը և բերանը: Երբեք չդիպչել դիմակի առաջային մասին: Մշակել ձեռքերը դիմակը փոխելուց հետո:
2. Դեմքի/աչքերի պաշտպանություն՝ ցանկալի է օգտագործել բազմակի օգտագործման ակնոցներ կամ դիմային վահաններ, որոնք պետք է ախտահանվեն յուրաքանչյուր կրելուց հետո